Արձանագրություն 3

«Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ կարիքների համար «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/07» ծածկագրով Բժշկական պարագաների և բժշկական նշանակության ապրանքների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Վեդի 27. 01.2025թ.
ժամը 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ
Ս. Խաչատրյան – «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի փոխտնօրեն
Անդամներ
Ա. Սիմոնյան- «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի դեղատան վարիչ
Հ. Գաբրիելյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահ

Քարտուղար-գնումների համակարգող

Լ.Բազիկյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գնումների համակարգող

1. Տվյալներ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

(Ս. Խաչատրյան)

1.1 Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են պահանջվող փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան, բացառությամբ «Կվանտա» ՍՊԸ-ի, ԱՁ Ռիտա Գասպարյանի և «Էքսպորտ Մոթորս» ՍՊԸ-ի: Մասնավորապես

- «Կվանտա» ՍՊԸ-ի կողմից համակարգ ներմուծված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարության (Հավելված 1) 1-ին կետը չի համապատասխանում հրավերի պայմաններին, մասնավորապես՝ բացակայում է մասնակցի անվանումը, «և իրեն փոխկապակցված անձինք» բառերը և ընթացակարգի ծածկագիրը:
- «ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ի կողմից համակարգ ներմուծված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարության (Հավելված 1) 1-ին կետը չի համապատասխանում հրավերի պայմաններին, մասնավորապես՝ բացակայում է մասնակցի անվանումը, «և իրեն փոխկապակցված անձինք» բառերը և ընթացակարգի ծածկագիրը:
- ԱՁ Ռիտա Գասպարյան-ի կողմից համակարգ ներմուծված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարության (Հավելված 1) 1-ին կետը չի համապատասխանում հրավերի պայմաններին, մասնավորապես՝ բացակայում է մասնակցի անվանումը և ընթացակարգի ծածկագիրը:

1.2 Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության՝ 04 մայիսի 2017թ. N526-Ն որոշման 41-րդ կետի պահանջները՝ **Հանձնաժողովը որոշեց**

1 աշխատանքային օրով կասեցնել նիստը և ծանուցել մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Անհամապատասխանությունները շտկելու դեպքում ներկայացված հայտերը կգնահատվեն բավարար, հակառակ դեպքում կգնահատվեն անբավարար և կմերժվեն՝ համաձայն Կարգի 42-րդ կետի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

2. Մասնակիցների առաջարկած գների մասին

(Ս. Խաչատրյան)

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները ներկայացվում են կից հավելվածով.

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3. «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/07» ծածկագրով հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ս. Խաչատրյան)

3.1 Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման 41-րդ կետով և հիմք ընդունելով ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/07 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.11-րդ կետի պահանջները՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել գնման ընթացակարգի նիստը և նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

3.2 ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/07 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (www.eauction.armeps.am) միջոցով էլեկտրոնայի աճուրդով ընթացակարգի հայտերի գնահատման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել շտկման համար նախատեսված վերջնաժամկետից հետո՝ 30.01.2025թ. ժամը 14:00-ին, Վեդու բժշկական կենտրոն ՓԲԸ-ի շենքում ՝ Արարատի մարզ ք.Վեդի Գայի 2/30:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ս. Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սիմոնյան

Հ. Գաբրիելյան

Քարտուղար՝ Լ.Բազիկյան